МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Национальный Политехнический Университет Армении

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS OF THE REPUBLIC OF ARMENIA

National Polytechnic University of Armenia

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ Ա/01/1203-23 «11» 08 2023թ.

«ԱՐԵՎ, ԼՈՒՅՍ, ԿԱՍԿԱԴ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
Ա. ՏԵՐ-ԿՈՒՐԵՂՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Տեր-Կուրեղյան,

Ի պատասխան 2023 թվականի հուլիսի 31-ի և օգոստոսի 9-ի Ձեր գրությունների հայտնում ենք, որ Հիմնադրամը չունի անհրաժեշտ մասնագիտական և տեխնիկական հնարավորություններ վերելակի ամբողջական տեխնիկական զննություն իրականացնելու և բոլոր թերությունները հայտնաբերելու համար, հակառակ դեպքում նման խնդրի համար երրորդ անձանց ներգրավումը կլիներ ինքնանպատակ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ծավալաթերթը կազմվել է այն ծավալով, որով հնարավոր է եղել Հիմնադրամի հնարավորությունների սահմաններում հայտնաբերել առկա անսարքությունները:

Վերոնշյալ գրություններով Ընկերությունը հայցել է լրացուցիչ ժամանակ (մինչև 10 աշխատանքային օր) չնախատեսված աշխատանքները կատարելու համար:

Հետագա աշխատանքների պլանավորման և պայմանագրային հարաբերությունների շարունակության հետ կապված հայտնում ենք Ձեզ, որ Հիմնադրամը պատրաստակամ է լրացուցիչ պայմանավորվածությունների միջոցով լուծել այն խնդիրները, որոնք օբյեկտիվորեն Ընկերության մեղքով չեն, մասնավորապես՝ Ընկերությունից անկախ պատճառներով անվտանգության որսիչների անսարքության փաստը թերությունների ակտով չարձանագրելը և փաստացի վերելակի վերանորոգումից հետո շահագործման անհնարինությունը նույն պատճառով: Հիմնադրամը կիսում է Ընկերության մոտեցումը և գտնում է, որ նման դեպքում անհրաժեշտ է վերանայել ձեռքբերված համաձայնությունները և համապատասխանեցնել նոր ի հայտ եկած հանգամանքներին: Փաստացի վերանայման անհրաժեշտությունը վերաբերում է աշխատանքների կատարման ժամկետներին, ծախսերին և այլ էական հանգամանքներին:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է արձանագրել, որ նախորդ պարբերությամբ նշված տարբերակը կարող էր հնարավոր լինել միայն այն դեպքում, եթե թերությունների ակտով և

Հասցե՝ ՀՀ, 0009, Երևան, Տերյան փ. 105 | Հեռ.՝ 374 10 52 46 29 | Ֆաքս՝ 374 10 54 58 43
Адрес: РА, 0009, Ереван, ул. Теряна 105 | Телефон: 374 10 52 46 29 | Факс: 374 10 54 58 43
Address: 105 Teryan str., Yerevan, 0009, RA |: Phone: 374 10 52 46 29 |: Fax: 374 10 54 58 43
www.polytechnic.am | info@polytechnic.am

ծավալաթերթով (Հիմնադրամի և Ընկերության կողմից նախատեսված և համաձայնեցված) բոլոր աշխատանքները կատարվեին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Անվտանգության որսիչների անսարքության պարզումը և թերությունների ակտով արձանագրումը անհնար էր օբյեկտիվ պատճառով, այն է՝ նման դետալի անսարքության պարզման համար անհրաժեշտ էր վերելակի փորձարկումը, ուստի Ընկերությունը չի կարող կրել պատասխանատվություն կամ որևէ այլ բացասական հետևանք սույն պատճառով վերելակի անսարքության համար, մինչդեռ փորձաքննությամբ արձանագրված տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների մնացած բոլոր խախտումների համար Ընկերությունը կրում է պատասխանատվություն, քանի որ նշված խախտումները արդյունք են թերությունների ակտով սահմանված աշխատանքների չկատարման կամ թերի կատարման: Մասնավորապես թերությունների ակտով ներկայացված է եղել.

1. էլ. Սխեմայի կարգաբերում, ինչը ըստ փորձաքննության եզրակացության լիարժեք չի արվել,
2. Քաշը կարգավորող դատչիկ, ինչը չի կատարվել
3. Հակակշռի 23 կգ 4 հատ ծանրոցների ավելացում, որոնք ըստ փորձաքննության եզրակացության ֆիքսված չեն

Հավելենք, որ որպես համապատասխան աշխատանքների կատարման ոլորտում մասնագիտացված կազմակերպություն Ձեր ղեկավարած Ընկերությունը պարտավոր էր թերությունների ակտի կազմման փուլում արձանագրել բոլոր թերությունները և ներկայացնել Հիմնադրամին երկկողմ քննարկման և հաստատման համար, անկախ այն հանգամանքից Հիմնադրամի կողմից կազմված ծավալաթերթում ներառված են, թե ոչ, այնինչ Ընկերությունը թերությունների ակտի կազմման փուլում դրսևորել է մասնագիտական ոչ լիարժեք մոտեցում, ինչի արդյունքում ձևավորվել է ոչ ամբողջական թերությունների ակտ:

Փաստացի, 03.08.2023 թվականի «Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 2017 եզրակացությամբ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական անվտանգության փորձագիտական լաբորատորիայի գլխավոր փորձագետ Ա. Օրդյանը արձանագրել է հետևյալ խախտումները.

1. ըստ նախատեսվածի չի գործում առաջին հարկի հորանի դռների մեխանիկական փականը,
2. բացակայում է արագության սահմանափակիչը գործարկող ճոպանի ձգվածությունը հսկող անջատիչը,
3. առկա են խախտումներ վերելակի ղեկավարման սխեմայում,
4. խցիկում դռների բացման կոճակը չի գործում,
5. ֆիքսված չեն հակակշռի քարերը:

Ընկերությունը իր պարտականությունների կատարման ընթացքում չի դրսևորել անհրաժեշտ ջանասիրություն և պատասխանատվություն, մասնավորապես՝ սույն թվականի հուլիսի 27-ին Ընկերության մասնագետները չեն ներկայացել և չեն կատարել համապատասխան աշխատանքները, մինչդեռ Հիմնադրամի և Ընկերության միջև ձեռք բերված նախորդ

համաձայնությամբ Ընկերությունը պարտավորվել էր նշված օրը կատարել աշխատանքներ, իսկ կատարված աշխատանքի արդյունքները չեն համապատասխանում պարտադիր պահանջներին, նախատեսված աշխատանքների որոշ մասը ընդհանրապես չի կատարվել Ընկերության կողմից:

Վերոնշյալ հանգամանքներից յուրաքանչյուրի առկայությունն ինքին հիմք է, որպեսզի Հիմնադրամը ձեռնարկի անհրաժեշտ քայլերը և դադարեցնի պայմանագրային հարաբերությունները: Իսկ միաժամանկյա առկայությունը Հիմնադրամին չի թողնում այլ տարբերակ, քան գնալ վերոնշյալ ճանապարհով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով կողմերի միջև 2023 թվականի մայիսի 15-ին կնքված ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետով՝ Հիմնադրամը 2023 թվականի օգոստոսի 14-ից միակողմանի լուծում է պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՌԵԿՏՈՐ Recoverable Signature **Գ.Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Signed by: VARDANYAN GOR 1908910593

Կատարող՝ Էներգետիկայի բաժնի պետ
Սմբատ Այդինյան
Հեռ.՝ 374 43 790001
Էլ-փոստ՝ smbat.aydinyan@mail.ru